ՀՀ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ԴԱՍԱԿԱՐԳԻՉ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Номер	N 67-Ն
Տիպ	Հրաման
Тип	Исходный акт
Статус	Չի գործում (18.06.2005-14.11.2013)
Первоисточник	ՀՀԳՏ 2005.06.08/14.1 Հոդ.163.1
Принят	Առևտրի և տնտեսական զարգացման նախարար
Дата принятия	31.03.2005
Подписан	Առևտրի և տնտեսական զարգացման նախարար
Дата подписания	31.03.2005
Дата вступления в силу	18.06.2005
Ուժը կորցնելու ամսաթիվ	14.11.2013

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
20 ապրիլի 2005 թ.
Պետական գրանցման թիվ 10305168

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

31 մարտի 2005 թ. N 67-Ն
ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԻՉ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի դ) կետով և հաշվի առնելով Ստանդարտացման Գիտատեխնիկական Խորհրդի որոշումը (արձանագրություն N 7 առ 13 դեկտեմբերի 2004 թ.)

Հրամայում եմ՝

1. Հաստատել «Հիվանդությունների դասակարգիչ. Մաս 1. Դասակարգում» ՀԴ 007.1-2003՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Գ. Բադալյանին:

Կ. Ճշմարիտյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՍԱԿԱՐԳԻՉ
ՀԴ 007.1-2003
(ՀՄԴ-10)

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԻՉ
Մ Ա Ս 1
Դ Ա Ս Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Ներածություն
1	Կիրառման ոլորտը
2	Նշանակումներ և համառոտագրություններ
3	Ընդհանուր դրույթներ
4	Դասակարգչի կառուցման և կոդավորման սկզբունքներ
5	Դասակարգում
Դաս I	Վարակիչ և մակաբուծական որոշ հիվանդություններ
Դաս	

II Նորագոյացություններ
Դաս III Արյան և արդյունաստեղծ օրգանների հիվանդություններ, առանձին խանգարումներ՝ իմունային մեխանիզմների ներգրավմամբ
Դաս IV Ներզատական համակարգի հիվանդություններ, սննդային և նյութափոխանակության խանգարումներ
Դաս V Հոգեկան խանգարումներ, վարքի խանգարումներ
Դաս VI Նյարդային համակարգի հիվանդություններ
Դաս VII Աչքի և նրա հավելյալ ապարատի հիվանդություններ
Դաս VIII Ականջի և պտկաձև ելունի հիվանդություններ
Դաս IX Արյան շրջանառության համակարգի հիվանդություններ
Դաս X Շնչառական օրգանների հիվանդություններ
Դաս XI Մարսողական օրգանների հիվանդություններ
Դաս XII Մաշկային և ենթամաշկային բջջանքի հիվանդություններ
Դաս XIII Ոսկրամկանային համակարգի և շարակցական հյուսվածքի հիվանդություններ
Դաս XIV Միզասեռական համակարգի հիվանդություններ
Դաս XV Հղիություն, ծննդաբերություն և հետծննդաբերական շրջան
Դաս XVI Պերինատալ շրջանում առաջացող առանձին վիճակներ
Դաս XVII Բնածին շեղումներ (զարգացման արատներ), դեֆորմացիաներ և քրոմոսոմային խանգարումներ
Դաս XVIII Կլինիկական և լաբորատոր հետազոտությունների ընթացքում բացահայտված և այլ խմբերում չդասակարգված ախտանիշներ, հատկանիշներ և նորմայից շեղումներ
Դաս XIX Վնասվածքներ, թունավորումներ և արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետևանքներ
Դաս XX Հիվանդացության և մահացության արտաքին պատճառները
Դաս XXI Բնակչության առողջական վիճակի վրա ազդող գործոնները և դիմելիությունը՝ առողջապահական հիմնարկներ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դեռևս 1856 թվականին համաշխարհային հայտնի վիճակագիր Վիլյամ Ֆառը սահմանել է «դասակարգում» հասկացությունը, որն ընդհանրացման մեթոդ է, որոնցով տարբեր մասնագետներ (բուժող բժիշկ, պաթանատոմ, իրավաբան և այլն) կարող են հիվանդությունները և մահվան ուսումնասիրության պատճառները հիմնավորված դասակարգել այնպես, որ այդ դասակարգումն առավելագույնը նպաստի խնդրի և ընդհանուր եզրակացության դուրսբերմանը:

Հիվանդությունների այս խմբավորումը պահպանված է նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպության հիվանդությունների միջազգային դասակարգչի 10-րդ վերանայված տարբերակում, որը կիրառել է Վ. Ֆառի կողմից առաջարկված խմբավորման մեթոդոլոգիան:

Կարևոր է տարանջատել հիվանդությունների անվանակարգային և վիճակագրական դասակարգումներ հասկացությունները: Անվանակարգային դասակարգման նպատակն է կազմել ներկայում գոյություն ունեցող բոլոր հիվանդությունների անվանացանկը՝ յուրաքանչյուր մարմնակազմական միավորը ներկայացնելով հնարավորին չափ մեկ անունով, իսկ վիճակագրական դասակարգումը՝ խմբավորելով մոտ հիվանդությունները՝ դրանց նշանակությանը համապատասխան:

ՀՄԴ 10-րդ դասակարգիչը բաժանված է 21 դասի: Նշված դասակարգչի 10-րդ վերանայման ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հիվանդությունների միջազգային դասակարգման ավանդական կառուցվածքը պահպանված է, փոփոխված է միայն կոդավորման թվային համակարգը, այն փոխարինվել է տառաթվայինով: Առաջին նշանը անգլերենի այբուբենի տառ է, իսկ 2-րդ և 3-րդ նշանները՝ թվային են: ՀՄԴ 10-ում կոդերի հնարավոր համարները ձգվում են A00.0-ից մինչև Z99.9: U00-U49 նախատեսված է նոր, անհայտ ծագման հիվանդությունների

ժամանակավոր ընդգրկման, իսկ U50-U99՝ գիտական հետազոտությունների նպատակների համար:

Հիվանդությունների դասակարգումը կարելի է բնորոշել որպես խմբերի համակարգ, որտեղ առանձին ախտաբանական վիճակները խմբավորվում են որոշակի չափանիշներին համապատասխան: Գոյություն ունեն դասակարգման բազմաթիվ եղանակներ և, հետևաբար, կան նաև տարբեր տեսակի դասակարգումներ (վիճակագրական, մորֆոլոգիական, կլինիկական և այլն): Հաճախ դասակարգման դասավորությունը կախված է վիճակագրական տվյալների հավաքագրման նպատակներից: Հիվանդությունների և խնդիրների (կապված առողջության հետ) միջազգային դասակարգման ՀՄԴ 10-րդ վերանայված դասակարգիչը վերջինն է բժշկական դասակարգումների բազմաթիվ վերանայումների շարքում: Առաջինը ձևավորվել է 1893 թ. և հայտնի է որպես Բերթիլյոնի դասակարգում կամ Մահվան պատճառների միջազգային ցանկ, որը ժամանակին կիրառվել է միայն մահվան պատճառների կոդավորման համար:

Հիվանդությունների դասակարգման մշակման և ներդրման գործընթացներում կարևորագույն դեր է կատարում Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը: Դեռևս Միջազգային VI կոնֆերանսից (1948 թ.) Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը ստանձնել է ՀՄԴ վերանայումների պատասխանատվությունը: Նշված տարեթվին Բերթիլյոնի մահվան պատճառների դասակարգումը վերանվանվել է որպես «Հիվանդությունների և մահվան պատճառների միջազգային ցանկի վերանայում»: Նույն ժամանակ նաև հավանության է արժանացել մահվան պատճառների և հիվանդությունների կոդավորման համապարփակ ցանկի ստեղծման գաղափարը: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն է համարվում ՀՄԴ 10-ի հեղինակային իրավունքի կրողը: Դասակարգումը հավանության է արժանացել 1989 թ. Ժնևում և ընդունվել է Առողջապահության համաշխարհային ընդհանուր ժողովի (ասամբլեայի) 43-րդ նստաշրջանի բանաձևում: ՀՄԴ-ն հրատարակվել է 1992 թվականին, իսկ ներդրումն առաջարկվել է սկսել 1993 թվականից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՍԱԿԱՐԳԻՉ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԻՉ

Մ Ա Մ 1.

ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Գործարկման թվականը 2004-01-01

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

Սույն դասակարգչով սահմանվում են հիվանդությունների տեսակները համապատասխան կոդերով:

Հիվանդությունների դասակարգիչը (այսուհետև՝ դասակարգիչ) հնարավորություն է տալիս անցկացնել նպատակաուղղված բժշկագիտական դիտարկումներ, աջակցում է բնակչության առողջության վիճակի գնահատմանը և առողջապահության քաղաքականության մեթոդական մոտեցումների մշակմանը:

Դասակարգչի դրույթները ենթակա են կիրառման շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների կողմից, որոնք իրականացնում են հիվանդությունների ախտորոշման և առողջապահական այլ գործընթացներ, ինչպես նաև վիճակագրական գործունեություններ:

2. ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն դասակարգչում կիրառված նշանակումները և համառոտագրությունները.

+ (խաչի նշան)՝ հիմնական հիվանդության կոդ

* (աստղանիշ)՝ ֆակուլտատիվ, լրացուցիչ կոդ, վերաբերում է հիվանդության դրսևորմանը

() կլոր փակագիծ՝

ա) կլոր փակագծի ներսում գրվում են բացառություններին վերաբերող կոդեր

բ) կիրառվում է կրկնակի կոդավորման ժամանակ: Նման դեպքերում, աստղանիշով խմբերում կլոր փակագծերի ներսում նշվում են խաչի նշանով կոդերը, իսկ խաչի նշանով

խմբերում՝ աստղանիշով կոդերը

[ ] քառակուսի փակագիծ՝ օգտագործվում են հոմանիշներ, այլընտրանքային բանաձևեր կամ բացատրական արտահայտություններ ներառելու համար

: երկու կետ՝ դրվում են «ներառյալ» և «բացառությամբ» տերմիններից հետո, ներառված կամ բացառված տերմինների թվարկման ժամանակ, երբ դրանց նախորդող բառերն ավարտված ձևակերպումներ չեն, բայց անհրաժեշտ է դրանք ներառել տվյալ խմբերում

ԱՀՃ (առանց հավելյալ ճշտումների)՝ օգտագործվում է հիշեցման համար, որ ախտաբանական վիճակը հավելյալ ճշտումներ չունի

ՉԴԱԽ (չեն դասակարգված այլ խմբերում)՝ այլ բաժիններում նշված խմբերը չեն դասակարգված

«և» շաղկապ՝ կիրառվում է և՛ «և»-ի, և՛ «կամ»-ի իմաստով

.- կետ, գծիկ՝ գոյություն ունի քառանիշ կոդը և այն պետք է փնտրել համապատասխան խմբերում

ԴՆԹ՝ դեզոքսիռիբոնուկլեինաթթու

ՀՄԴ՝ հիվանդությունների միջազգային դասակարգում

ՁԻԱՀ՝ ձեռք բերովի իմունային անբավարարության համախտանիշ

ՄԻԱՎ՝ մարդու իմունային անբավարարության վիրուս

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1 Սույն դասակարգիչը մտնում է Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվական դասակարգման և կոդավորման միասնական համակարգի (SSUS ԴԿ ՄՀ) կազմի մեջ:

3.2 Դասակարգման օբյեկտներն են հիվանդությունների տեսակները, որոնց ողջ բազմությունը բաժանվում է դասերի, խմբերի և ենթախմբերի:

4. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԿՈԴԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

4.1 Համաճարակաբանական և գործնական նպատակների համար օգտագործվող հիվանդությունների վիճակագրական դասակարգումը խմբավորվել է հետևյալ կերպ.

- համաճարակային հիվանդություններ,

- կառուցվածքային կամ ընդհանուր հիվանդություններ,

- տեղային հիվանդություններ՝ խմբավորված ըստ անատոմիական տեղայնացման,

- զարգացման հետ կապված հիվանդություններ,

- վնասվածքներ:

4.2 Դասակարգիչը բաժանված է 21 դասերի (լատինական տառերով) (A-Z):

4.3 Դասերը ստորաբաժանվում են եռանիշ խմբերի, որոնք նշված են լատինական տառերով (A-Z) և երկնիշ թվերով:

4.4 Եռանիշ խմբերը կարող են ստորաբաժանված լինել 10 ենթախմբերի (4 նիշով):

Եթե խումբը ստորաբաժանում չունի, օգտագործվում է «X» տառը չորրորդ նիշը լրացնելու նպատակով, որը կարգավորում է ՀՀ առողջապահության նախարարությունը:

4.5 Դասակարգիչը բաղկացած է հիվանդության տեսակների անվանումներից, համապատասխան կոդերից և համառոտ պարզաբանումից:

5. ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Դ Ա Ս Ի

ՎԱՐԱԿԻՉ ԵՎ ՄԱԿԱԲՈՒԾԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(A00-B99)

Ներառյալ՝ փոխանցվող և տարափոխիկ հիվանդությունները

Բացառությամբ՝ գրիպ և այլ սուր շնչառական վարակիչ հիվանդությունները (J00-J22), հղիությունը, ծննդաբերությունը և հետծննդյան շրջանը բարդացնող վարակիչ և մակաբուծական հիվանդությունները (բացառությամբ մանկաբարձական փայտացումը և մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդությունները) (ՄԻԱՎ) (O98.-), շուրջծննդային (պերինատալ) շրջանին բնորոշ վարակիչ և մակաբուծական հիվանդությունները (բացառությամբ շուրջծննդային փայտացումը, բնածին սիֆիլիսը, շուրջծննդային գոնոկոկային վարակները և մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդությունները) (ՄԻԱՎ) (P35-P39), որոշ տեղային վարակներ, տես՝ օրգան-համակարգերին վերաբերող դասերը, վարակիչ հիվանդությունների հարուցչակիրները կամ կասկածելիները (Z22.-)

ԱՂԻՔԱՅԻՆ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(A00-A09)

A00 Խոլերա

A00.0 Խոլերայի վիբրիոն 01, բիովար cholerae-ից առաջացած խոլերա

A00.1 Խոլերայի վիբրիոն 01, բիովար eltor-ից առաջացած խոլերա

A00.9 Չճշտված խոլերա

A01 Տիֆ և պարատիֆեր

A01.0 Որովայնային տիֆ

A01.1 Պարատիֆ A

A01.2 Պարատիֆ B

A01.3 Պարատիֆ C

A01.4 Չճշտված պարատիֆ

A02 Այլ սալմոնելոզային վարակներ

Ներառյալ՝ վարակները (կամ սննդային թունավորումները)՝ առաջացած Salmonella-ի ցանկացած շճատիպից, որը տարբերվում է s. typhi-ից և s. paratyphi-ից

A02.0 Սալմոնելյոզային էնտերիտ (աղեբորբ)

A02.1 Սալմոնելյոզային արյան վարակում

A02.2+ Սալմոնելյոզային տեղակայված վարակ

A02.8 Սալմոնելյոզային ճշտված այլ վարակ

A02.9 Սալմոնելյոզային չճշտված վարակ

A03 Շիգելյոզ

A03.0 Շիգելյոզ՝ Shigella dysenteriae-ից առաջացած

A03.1 Շիգելյոզ՝ Shigella flexneri-ից առաջացած

A03.2 Շիգելյոզ՝ Shigella boydii-ից առաջացած

A03.3 Շիգելյոզ՝ Shigella sonnei-ից առաջացած

A03.8 Այլ շիգելյոզ

A03.9 Չճշտված շիգելյոզ

A04 Այլ մանրէական աղիքային վարակներ

Բացառությամբ՝ մանրէային սննդային թունավորումները (A05.-), պալարախտային աղեբորբը (էնտերիտը) (A18.3)

A04.0 Էնտերոպաթոգեն վարակ՝ Escherichia coli-ից առաջացած

A04.1 Էնտերոպաթոգեն վարակ՝ Escherichia coli-ից առաջացած

A04.2 Էնտերոինվազիային վարակ՝ Escherichia coli-ից առաջացած

A04.3 Էնտերոհեմոռագիկ վարակ՝ Escherichia coli-ից առաջացած

A04.4 Այլ աղիքային վարակներ՝ Escherichia coli-ից առաջացած

A04.5 Էնտերիտ՝ Campylobacter-ներից առաջացած

A04.6 Էնտերիտ՝ Yersinia enterocolitica-ից առաջացած

Բացառությամբ՝ էքստրաինտեստինալ իերսինիոզ (A28.2)

A04.7 Էնտերոկոլիտ՝ Clostridium difficile-ից առաջացած

A04.8 Այլ ճշտված մանրէային աղիքային վարակներ

A04.9 Մանրէային չճշտված աղիքային վարակներ

A05 Այլ մանրէային սննդային թունավորումներ

Բացառությամբ՝ վարակները՝ Escherichia coli-ից առաջացած (A04.0-A04.4), լիստերիոզը (A32-), սալմոնելյոզային սննդային թունավորումները և վարակները (A02-), թունավոր սննդամթերքների թունավոր ազդեցությունը (T61-T62),

A05.0 Ստաֆիլոկոկային սննդային թունավորում

A05.1 Բոտուլիզմ

A05.2 Սննդային թունավորում՝ Clostridium perfringens (Clostridium welchii)-ից առաջացած

A05.3 Սննդային թունավորումներ՝ Vibrio parahaemolyticus-ից առաջացած

A05.4 Սննդային թունավորումներ՝ Bacillus cereus-ից առաջացած

A05.8 Ճշտված այլ մանրէային սննդային թունավորումներ

A05.9 Չճշտված այլ սննդային թունավորումներ

A06 Ամեոբիազ

Ներառյալ՝ Entamoeba histollytica-ից առաջացած վարակները

Բացառությամբ՝ այլ կենդանախտային (պրոտոզոային) աղիքային հիվանդությունները (A07-)

A06.0 Սուր ամեոբային արնալուծ (դիզենտերիա)

A06.1 Քրոնիկ աղիքային ամեոբիազ

A06.2 Ամեոբային ոչ արնալուծ (դիզենտերիային) կոլիտ

A06.3 Աղիքների ամեոբոմա

A06.4 Լյարդի ամեոբային թարախակույտ

A06.5+ Թոքի ամեոբային թարախակույտ (J99.8 *)

A06.6+ Գլխուղեղի ամեոբային թարախակույտ (G07 *)

A06.7 Մաշկային ամեոբիազ

A06.8 Ամեոբային վարակ, այլ տեղակայման

A06.9 Չճշտված ամեոբիազ

A07 Նախակենդանիներից առաջացած այլ աղիքային հիվանդություններ

A07.0 Բալանտիդիազ

A07.1 Ժիարդիազ (Լյամբլիոզ)

A07.2 Կրիպտոսպորիդիոզ

A07.3 Իզոսպորոզ

A07.8 Նախակենդանիներից առաջացած ճշտված աղիքային այլ հիվանդություններ

A07.9 Նախակենդանիներից առաջացած աղիքային չճշտված հիվանդություններ

A08 Վիրուսային և ճշտված այլ աղիքային վարակներ

Բացառությամբ՝ գրիպը՝ ստամոքս-աղիքային ուղու ներգրավմամբ (J10.8, J11.8)

A08.0 Ռոտավիրուսային (աղեբորբ) էնտերիտ

A08.1 Նորվոլկ հարուցչից առաջացած սուր գաստրոէնտերոպաթիա

A08.2 Ադենովիրուսային էնտերիտ

A08.3 Վիրուսային այլ էնտերիտներ

A08.4 Վիրուսային աղիքային վարակ, չճշտված

A08.5 Ճշտված այլ աղիքային վարակներ

A09 Ենթադրյալ վարակային ծագմամբ կասկածով դիարեա և գաստրոէնտերիտ

Ծանոթություն: Այն դեպքերում, երբ A09 խորագրում թվարկած ախտանիշները՝ չճշտման դեպքում, դիտվում են որպես ոչ վարակային, պետք է դասակարգվեն K52.9 խորագրում

Բացառությամբ՝ մանրէներից, վիրուսներից և այլ ճշտված վարակային ազդակներից առաջացած հիվանդությունները՝ (A00-A08) [ոչ վարակային դիարեաները (K52.9), նորածնայինը (P78.3)]

ՊԱՂԱՐԱԽՏ (ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶ)

(A15-A19)

Ներառյալ՝ վարակները, հարուցված՝ micobacterium tuberculiosis և micobacterium bovis

Բացառությամբ՝ բնածին պալարախտը (P37.0), պալարախտի հետ կապված պնևմոկոնիոզը (J65), պալարախտի հետևանքները (B90-), քարապալարախտը (J65)

A15 Շնչառական օրգանների պալարախտ մանրէաբանորեն, հյուսվածքաբանորեն հաստատված

A15.0 Թոքերի պալարախտ՝ հաստատված մանրէաբանորեն կուլտուրայի աճի առկայությամբ կամ բացակայությամբ

A15.1 Թոքերի պալարախտ՝ հաստատված միայն կուլտուրայի աճի առկայությամբ

A15.2 Թոքերի պալարախտ՝ հաստատված հյուսվածքաբանորեն

A15.3 Թոքերի պալարախտ՝ հաստատված չճշտված մեթոդներով

A15.4 Ներկրծքային ավշահանգույցների պալարախտ՝ հաստատված մանրէաբանորեն և հյուսվածքաբանորեն (A15.7)

Բացառությամբ՝ եթե հաստատված է որպես առաջնային (A15.7)

A15.5 Կոկորդի, շնչափողի, բրոնխների պալարախտ՝ հաստատված մանրէաբանորեն և հյուսվածքաբանորեն

A15.6 Պալարախտային պլևրիտ, կրծքամզաբորբ՝ հաստատված մանրէաբանորեն և հյուսվածքաբանորեն

Բացառությամբ՝ տուբերկուլյոզային պլևրիտ շնչական օրգանների առաջնային պալարախտի դեպքում՝ հաստատված մանրէաբանորեն և հյուսվածքաբանորեն (A15.7)

A15.7 Շնչառական օրգանների առաջնային տուբերկուլյոզ՝ հաստատված մանրէաբանորեն և հյուսվածքաբանորեն

A15.8 Շնչառական այլ օրգանների պալարախտ՝ հաստատված մանրէաբանորեն և հյուսվածքաբանորեն

A15.9 Շնչառական օրգանների պալարախտ՝ չճշտված տեղակայումով, հաստատված մանրէաբանորեն և հյուսվածքաբանորեն

A16 Շնչառական օրգանների պալարախտ՝ չհաստատված մանրէաբանորեն և հյուսվածքաբանորեն

A16.0 Թոքերի պալարախտ՝ մանրէաբանական և հյուսվածքաբանական հետազոտությունների բացասական արդյունքով

A16.1 Թոքերի պալարախտ՝ մանրէաբանորեն և հյուսվածքաբանորեն չհետազոտված

A16.2 Թոքերի պալարախտ՝ չնշված մանրէաբանական կամ հյուսվածքաբանական հաստատմամբ

A16.3 Ներկրծքային ավշահանգույցների պալարախտ՝ չնշված մանրէաբանական կամ հյուսվածքաբանական հաստատմամբ

Բացառությամբ՝ ներկրծքային ավշահանգույցների պալարախտ (A16.7)

A16.4 Կոկորդի, շնչափողի և բրոնխների պալարախտ՝ չնշված մանրէաբանական կամ հյուսվածքաբանական հաստատմամբ

A16.5 Պալարախտային պլևրիտ՝ չնշված մանրէաբանական կամ հյուսվածքաբանական հաստատմամբ

Բացառությամբ՝ պալարախտային պլևրիտը շնչական օրգանների առաջնային պալարախտի ժամանակ (A16.7)

A16.7 Շնչառական օրգանների առաջնային պալարախտ՝ չնշված մանրէաբանական կամ հյուսվածքաբանական ախտորոշման մասին

A16.8 Այլ օրգանների պալարախտ՝ չնշված մանրէաբանական կամ հյուսվածքաբանական ախտորոշմամբ

A16.9 Շնչառական օրգանների անհայտ տեղակայմամբ պալարախտ՝ չնշված մանրէաբանական կամ հյուսվածքաբանական ախտորոշմամբ

A17+ Նյարդային համակարգի պալարախտ

A17.0+ Պալարախտային մենինգիտ (G01 *)

A17.1+ Մենինգիտային տուբերկուլյոմա (G07 *)

A17.8+ Պալարախտ՝ նյարդային համակարգի այլ տեղակայմամբ

A17.9+ Նյարդային համակարգի չճշտված պալարախտ

A18 Այլ օրգանների պալարախտ

A18.0+ Ոսկրերի և հոդերի պալարախտ

A18.1+ Միզասեռական օրգանների պալարախտ

A18.2 Պալարախտային ծայրամասային լիմֆադենոպաթիա

Բացառությամբ՝ ավշահանգույցների տուբերկուլյոզը՝ [միջընդերային և հետորովայնամիզային (A18.3), ներկրծքային (A15.4, A16.3)], պալարախտային տրախեոբրոնխային ադենոպաթիա (գեղձախտություն) (A15.4, A16.3)

A18.3 Աղիքների, որովայնի և ճարպոնի լիմֆատիկ հանգույցների պալարախտ

A18.4 Մաշկի, ենթամաշկային բջջանքի պալարախտ

Բացառությամբ՝ կարմիր գայլախտը (L93-), սիստեմային (M32.-)

A18.5+ Աչքի պալարախտ

Բացառությամբ՝ կոպի սովորական գայլախտը (A18.4)

A18.6+ Ականջի պալարախտ

Բացառությամբ՝ պալարախտային մաստոիդիտը (A18.0+)

A18.7+ Մակերիկամի պալարախտ (E35.1 *)

A18.8+ Այլ ճշտված օրգանների պալարախտ

A19 Միլիար պալարախտ

Ներառյալ՝ պալարախտը՝ գեներալիզացված (ընդհանրացված), տարածված պալարախտային բազմաշճաթաղանթաբորբը (պոլիսերոզիտ)

A19.0 Սուր միլիար պալարախտ՝ մեկ հաստատված տեղակայումով

A19.1 Սուր միլիար պալարախտ՝ բազմակի տեղակայմամբ

A19.2 Սուր միլիար պալարախտ՝ չճշտված տեղակայմամբ

A19.8 Միլիար պալարախտի այլ ձևեր

A19.9 Միլիար պալարախտ՝ չճշտված տեղակայմամբ

ՈՐՈՇ ՄԱՆՐԷԱՅԻՆ ՉՈՈՆՈՂՆԵՐ (ԿԵՆԴԱՆԱԽՏԵՐ) (A20-A28)

A20 Ժանտախտ

Ներառյալ՝ Yersinia pestis-ից առաջացած վարակ

A20.0 Բուբոնային ժանտախտ

A20.1 Բջջամաշկային ժանտախտ

A20.2 Թոքային ժանտախտ

A20.3 Ժանտախտային մենինգիտ

A20.7 Սեպտիկ ժանտախտ

A20.8 Ժանտախտի այլ ձևեր

A20.9 Չճշտված ժանտախտ

A21 Տուլյարեմիա

Ներառյալ՝ Francisella tularensis-ից առաջացած վարակը [ճագարային տենդը, եղջերուի ճանճի տենդը]

A21.0 Ուլցերոգ լանդուլյարային տուլյարեմիա

A21.1 Ակնագեղձային (օկուլոգլանդյուլյար) տուլյարեմիա

A21.2 Թոքային տուլյարեմիա

A21.3 Աղեստամոքսային տուլյարեմիա

A21.7 Ընդհանրացված տուլյարեմիա

A21.8 Տուլյարեմիայի այլ ձևեր

A21.9 Չճշտված տուլյարեմիա

A22 Սիբիրյան խոց

Ներառյալ՝ Bacillus anthracis-ից առաջացած սիբիրյան խոց

A22.0 Սիբիրյան խոցի մաշկային ձևը

A22.1 Սիբիրյան խոցի թոքային ձևը

A22.2 Սիբիրյան խոցի աղեստամոքսային ձևը

A22.7 Սիբիրյան խոցի սեպտիցեմիա

A22.8 Սիբիրյան խոցի այլ ձևեր

A22.9 Չճշտված սիբիրյան խոց

A23 Բրուցելյոզ

Ներառյալ՝ տենդը [մալթայան, միջերկրածովային]

A23.0 Brucella melitensis-ից առաջացած բրուցելյոզ

A23.1 Brucella abortus-ից առաջացած բրուցելյոզ

A23.2 Brucella suis-ից առաջացած բրուցելյոզ

A23.3 Brucella canis-ից առաջացած բրուցելյոզ

A23.8 Բրուցելյոզի այլ ձևեր

A23.9 Չճշտված բրուցելյոզ

A24 Սապ և մելիոիդոզ

A24.0 Սապ-խլնախտ

A24.1 Սուր կամ կայծակնային մելիոիդոզ

A24.2 Ենթասուր և քրոնիկ մելիոդիոզ

A24.3 Այլ ճշտված մելիոիդոզ

A24.4 Չճշտված մելիոիդոզ

A25 Առնետների կծածից առաջացած տենդ

A25.0 Սպիրիլյոզ

A25.1 Ստրեպտոբացիլյոզ

A25.9 Առնետի կծելուց առաջացած չճշտված տենդ

A26 Էրիզիպելոիդ

A26.0 Մաշկային էրիզիպելոիդ

A26.7 Erysipelothrix-ից առաջացած սեպտիցեմիա

A26.8 Էրիզիպելոիդի այլ ձևեր

A26.9 Չճշտված էրիզիպելոիդ

A27 Լեպտոսպիրոզ

A27.0 Դեղնահեմոռագիկ լեպտոսպիրոզ

A27.8 Լեպտոսպիրոզի այլ ձևեր

A27.9 Չճշտված լեպտոսպիրոզ

A28 Մանրէային այլ կենդանախտեր (զոոնոզներ)՝ չդասակարգված այլ խորագրերում

A28.0 Պաստերելյոզ

A28.1 Կատուների ճանկռոտումից առաջացած տենդ

A28.2 Էքստրաինտեստինալ իերսինիոզ

Բացառությամբ՝ ժանտախտը (A20.-), Yersinia enterocolitica-ից առաջացած էնտերիտը (A04.6)

A28.8 Ճշտված այլ մանրէային կենդանախտեր, որոնք ընդգրկված չեն այլ խմբերում

A28.9 Չճշտված մանրէային կենդանախտեր

ԱՅԼ ՄԱՆՐԷԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(A30-A49)

A30 Լեպրա (Բոր) (Հանսենի հիվանդություն)

Ներառյալ՝ Mucobacterium-ից առաջացած վարակը

Բացառությամբ՝ լեպրայի հեռավոր հետևանքները (B92)

A30.0 Չտարբերակված լեպրա

A30.1 Պալարախտային լեպրա

A30.2 Սահմանային պալարախտային լեպրա
A30.3 Սահմանային լեպրա
A30.4 Սահմանային լեպտոմատոզ լեպրա
A30.5 Լեպտոմատոզ լեպրա
A30.8 Լեպրայի այլ ձևեր
A30.9 Չճշտված լեպրա
A31 Վարակներ՝ առաջացած այլ սնկամանրէներից
Բացառությամբ՝ լեպրա (A30.-), պալարախտ (A15-A19)
A31.0 Micobacterium-ից առաջացած թոքային վարակ
A31.1 Micobacterium-ից առաջացած մաշկային վարակ
A31.8 Micobacterium-ից առաջացած այլ վարակներ
A31.9 Micobacterium-ից առաջացած չճշտված այլ վարակ
A32 Լիստերիոզ
Ներառյալ՝ լիստերիոզային սննդային վարակ
Բացառությամբ՝ նորածնային (դիսեմինացված) լիստերիոզը (P37.2)
A32 Մաշկային լիստերիոզ
A32.1+ Լիստերիոզային մենինգիտ և մենինգոէնցեֆալիտ
A32.7 Լիստերիոզային սեպտիցեմիա
A32.8 Լիստերիոզի այլ ձևեր
A32.9 Չճշտված լիստերիոզ
A33 Նորածնի պրկախտ
A34 Մանկաբարձական պրկախտ
A35 Պրկախտի ձևեր
Բացառությամբ՝ պրկախտը՝ մանկաբարձական (A34), նորածնի (A33)
A36 Դիֆթերիա
A36.0 Ըմպանի դիֆթերիա
A36.1 Քիթըմպանի դիֆթերիա
A36.2 Կոկորդի դիֆթերիա
A36.3 Մաշկի դիֆթերիա
Բացառությամբ՝ էրիթրազման (L08.1)
A36.8 Այլ դիֆթերիա
A36.9 Չճշտված դիֆթերիա
A37 Կապույտ հազ
A37.0 Bordetella pertussis-ից առաջացած կապույտ հազ
A37.1 Bordetella parapertussis-ից առաջացած կապույտ հազ
A37.8 Bordetella-ի տիպի այլ ճշտված հարուցչից առաջացած կապույտ հազ
A37.9 Չճշտված կապույտ հազ
A38 Քութեշ
Բացառությամբ՝ ստրեպտոկոկային անգինան (բկացավը) (J02.0)
A39 Մենինգոկոկային վարակ
A39.0 Մենինգոկոկային մենինգիտ (G01 *)
A39.1+ Ոտերխաուս-ֆրիդերիկսենի համախտանիշ (E35.1 *)
A39.2 Սուր մենինգոկոկեմիա
A39.3 Քրոնիկ մենինգոկոկեմիա
A39.4 Չճշտված մենինգոկոկեմիա
A39.5+ Սրտի մենինգոկոկային հիվանդություն
A39.8 Մենինգոկոկային այլ վարակներ
A39.9 Չճշտված մենինգոկոկային վարակ

A40 Ստրեպտոկոկային սեպտիցեմիա (արնանեխություն)

Բացառությամբ՝ ծննդաբերական շրջանը (O75.3), շուրջծննդաբերականը (P36.0-P36.1), հետծննդյանը, որպես հետևանք վիժումը, արտարգանդային կամ այլ հղիությունը (O03-O07,O08.0) [պատվաստումը (T88.0), ներարկումը, փոխներարկումը կամ բուժական ներարկումը (T80.2)], հետծննդայինը (O85), հետպրոցեդուրային (T81.4)

A40.0 Ա խմբի ստրեպտոկոկերից առաջացած սեպտիցեմիա

A40.1 Բ խմբի ստրեպտոկոկերից առաջացած սեպտիցեմիա

A40.2 Դ խմբի ստրեպտոկոկերից առաջացած սեպտիցեմիա

A40.3 Streptococcus pneumonia-ից առաջացած սեպտիցեմիա

A40.8 Այլ ստրեպտոկոկերից առաջացած սեպտիցեմիա

A40.9 Չճշտված ստրեպտոկոկային սեպտիցեմիա

A41 Այլ սեպտիցեմիա

Բացառությամբ՝ բակտերիեմիան ԱՀՃ (A49.9), ծննդաբերության շրջանում (O75.3), որպես հետևանք՝ [վիժումների, արտարգանդային կամ մոլար (արտատեղային) հղիության (O33-O07,O08.0), պատվաստումը (T88.0), ներարկումը, փոխներարկումը և բուժական ներարկումը (T80.2)], սեպտիցեմիա (առաջացած)՝ [շողասնկային (ակտինոմիկոզային) (A42.7), տենդաբշտիկային վիրուսից (հերպեսի վիրուսից (B00.7), գոնոկոկային (A54.8), սնկային (B37.7), լիստերիոզային (A32.7), մենինգոկոկային (A39.2-A39.4), նորածնային (P36.-), հետծննդյան (O85), հետպրոցեդուրային (T81.4), սիբիրախոցային (A22.7), ստրեպտոկոկային (A40.-), տուլյարեմիային (21.7), էքստրաինտեստինային իերսինիոզային (A28.2), Erysipelothrix (A26.7)], սեպտիցեմիային [մելիոիդոզ (A24.1), ժանտախտ (A20.7)], տոքսիկ շոկի համախտանիշ (A48.3)

A41.0 Staphylococus aureus-ից առաջացած սեպտիցեմիա

A41.1 Այլ ճշտված ստաֆիլոկոկերից առաջացած սեպտիցեմիա

A41.2 Չճշտված ստաֆիլոկոկերից առաջացած սեպտիցեմիա

A41.3 Haemophilus influenzae-ից առաջացած սեպտիցեմիա

A41.4 Անաէրոբներից առաջացած սեպտիցեմիա

Բացառությամբ՝ գազային գանգրենան (A48.0)

A41.5 Այլ գրամբացասական մանրէներից առաջացած սեպտիցեմիա

A41.8 Այլ ճշտված արուևանեխություն

A41.9 Չճշտված արուևանեխություն

A42 (Ակտինոմիկոզ) շողասնկախտ

Բացառությամբ՝ ակտինոմիցետոման (B47.1)

A42.0 Թոքային շողասնկախտ

A42.1 Որովայնային շողասնկախտ

A42.2 Պարանոցադիմային շողասնկախտ

A42.7 Շողասնկախտային սեպտիցեմիա

A42.8 Այլ շողասնկախտներ

A42.9 Չճշտված շողասնկախտներ

A43 Նոկարդիոզ շողասնկախտներ

A43.0 Թոքային նոկարդիոզ

A43.1 Մաշկի նոկարդիոզ

A43.8 Նոկարդիոզի այլ ձևեր

A43.9 Չճշտված նոկարդիոզ

A44 Բարթոնելյոզ

A44.0 Համակարգային բարթոնելյոզ

A44.1 Մաշկային և մաշկալորձաթաղանթային բարթոնելյոզ

A44.8 Այլ բարթոնելյոզներ

A44.9 Չճշտված բարթոնելյոզ

A46 Կարմիր քամի

Բացառությամբ՝ ծննդաբերական կամ հետծննդային շրջանի կարմիր քամին (O86.8)

A48 Այլ մանրէական հիվանդություններ՝ չդասակարգված այլ խմբերում

Բացառությամբ՝ ակտինոմիկոզային միցետոման (B47.1)

A48.0 Գազային գանգրենա

A48.1 Լեգիոների հիվանդություն

A48.2 Լեգիոների հիվանդություն՝ առանց թոքաբորբի (Պոնտիակի տենդ)

A48.3 Տոքսիկ շոկի համախտանիշ

Բացառությամբ՝ սեպտիցեմիա ԱՀՃ (A41.9) [էնդոտոքսիկ շոկ ԱՀՃ (A57.8)]

A48.4 Բրազիլական պուրպուրային տենդ

A48.8 Ճշտված այլ մանրէային հիվանդություններ

A49 Չճշտված տեղակայմամբ մանրէային վարակներ

Բացառությամբ՝ հիվանդությունների պատճառ հանդիսացող մանրէային ազդակները, որոնք դասակարգված են այլ դասերում (B95-B96),

ռիկկեցիաներից առաջացած վարակը ԱՀՃ (A79.9),

սպիրոխետներից առաջացած վարակը ԱՀՃ (A69.9),

խլամիդիաներից առաջացած վարակը ԱՀՃ (A74.9),

մենինգոկոկային վարակը ԱՀՃ (A39.9)

A49.0 Չճշտված ստաֆիլոկոկային վարակ

A49.1 Չճշտված ստրեպտոկոկային վարակ

A49.2 Haemophilus influenzqe-ից առաջացած չճշտված վարակ

A49.3 Միկոպլազմայից առաջացած չճշտված վարակ

A49.8 Չճշտված տեղակայմամբ այլ մանրէային վարակներ

A49.9 Չճշտված մանրէային վարակներ

ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՍԵՌԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՎԱՐԱԿՆԵՐ (A50-A64)

Բացառությամբ՝ մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդություններ (ՄԻԱՎ)(B20-B24), Ռեյտերի հիվանդությունը (M02.3), ոչ առանձնահատուկ և ոչ գոնոկոկային ուրեթրիտ (N34.1)

A50 Բնածին սիֆիլիս

A50.0 Վաղ բնածին սիֆիլիս՝ ախտանիշներով

A50.1 Վաղ բնածին գաղտնի սիֆիլիս

A50.2 Չճշտված վաղ բնածին սիֆիլիս

A50.3 Ուշացած բնածին աչքի սիֆիլիսային ախտահարում

Բացառությամբ՝ Գետչինսոնի պատանեկան (տրիադա) եռանշանի (A50.5)

A50.4 Ուշացած բնածին նյարդային սիֆիլիս (պատանեկան նյարդային սիֆիլիս)

Բացառությամբ՝ Գետչինսոնի պատանեկան (տրիադային) եռանշանի (A50.5)

A50.5 Ուշացած բնածին սիֆիլիսի այլ ձևեր՝ ախտանիշներով

A50.6 Ուշացած բնածին գաղտնի սիֆիլիս

A50.7 Չճշտված ուշացած բնածին սիֆիլիս

A50.9 Չճշտված բնածին սիֆիլիս

A51 Վաղ սիֆիլիս

A51.0 Սեռական օրգանների առաջնային սիֆիլիս

A51.1 Հետանցքի շրջանի առաջնային սիֆիլիս

A51.2 Առաջնային սիֆիլիս՝ այլ տեղակայմամբ

A51.3 Մաշկի և լորձաթաղանթների երկրորդային սիֆիլիս

A51.4 Երկրորդային սիֆիլիսի այլ ձևեր

A51.5 Վաղ գաղտնի սիֆիլիս

A51.9 Վաղ չճշտված սիֆիլիս

A52 Ուշացած սիֆիլիս

A52.0+ Սիրտանոթային համակարգի սիֆիլիս

A52.1 Նյարդային սիֆիլիս՝ ախտանիշներով

A52.2 Առանց ախտանիշների նյարդային սիֆիլիս

A52.3 Չճշտված նյարդային սիֆիլիս

A52.7 Ուշացած սիֆիլիսի այլ ախտանիշներ

A52.8 Ուշացած գաղտնի սիֆիլիս

A52.9 Ուշացած չճշտված սիֆիլիս

A53 Սիֆիլիսի այլ և չճշտված ձևեր

A53.0 Գաղտնի սիֆիլիս՝ չճշտված որպես վաղ կամ ուշացած

A53.9 Չճշտված սիֆիլիս

Բացառությամբ՝ սիֆիլիսը ԱՀՃ, որը մահվան պատճառ է մինչև 2տ հասակը (A50.2)

A54 Գոնոկոկային վարակ

A54.0 Միզասեռական ուղու ստորին հատվածների գոնոկոկային վարակ՝ առանց հարմիզուկային կամ հարակից գեղձերի թարախակալման

Բացառությամբ՝ միզասեռական գեղձերի թարախակալման հետ (A54.1), հարմիզուկային թարախակալման հետ (A54.1)

A54.1 Միզասեռական ուղու ստորին հատվածների գոնոկոկային վարակ՝ հարմիզուկային և հարակից գեղձերի թարախակալմամբ

A54.2+ Գոնոկոկային պելվիոպերիտոնիտ և միզասեռական օրգանների այլ գոնոկոկային վարակ

Բացառությամբ՝ որովայնամզի գոնոկոկային բորբոքումը (A54.8)

A54.3 Աչքի գոնոկոկային վարակ

A54.4 Ոսկրամկանային համակարգի գոնոկոկային վարակ

A54.5 Գոնոկոկային ֆարինգիտ (ըմպանաբորբ)

A54.6 Հետանցքաղիքային շրջանի գոնոկոկային վարակ

A54.8 Այլ գոնոկոկային վարակներ

Բացառությամբ՝ գոնոկոկային պելվիոպերիտոնիտը (կոնքաորովայնամզաբորբը) (A54.2)

A54.9 Չճշտված գոնոկոկային վարակ

A55 Խլամիդային լիմֆոգրանուլեմա (վեներական)

A56 Սեռական ուղիով փոխանցվող այլ խլամիդային վարակներ

Ներառյալ՝ Clamidia trachomatis-ից առաջացած, սեռական ուղիով փոխանցվող հիվանդությունները

Բացառությամբ՝ խլամիդային [լիմֆոգրանուլեմայի (A55)], նորածնային կոնյուկտիվիտը (եղջերաթաղանթի բորբոքում) (P39.1) [թոքաբորբ (P23.1)], A74 խորագրերում դասակարգված վիճակներ

A56.0 Միզասեռական համակարգի ստորին հատվածի խլամիդային վարակներ

A56.1+ Փոքր կոնքի և այլ միզասեռական օրգանների խլամիդային վարակներ

A56.2 Միզասեռական համակարգի չճշտված խլամիդային վարակ

A56.3 Հետանցքաղիքային շրջանի խլամիդային վարակ

A56.4 Խլամիդային ֆարինգիտ

A56.8 Սեռական ուղիով փոխանցվող այլ տեղակայմամբ խլամիդային վարակներ

A57 Շանկրոիդ (փափուկ շանկր)

A58 Աճուկային գրանուլեմա

A59 Տրիխոմոնոզ

Բացառությամբ՝ աղիքային տրիխոմոնոզը (A07.8)

A59.0 Միզասեռական տրիխոմոնոզ

A59.8 Այլ տեղակայմամբ տրիխոմոնոզ

A59.9 Չճշտված տրիխոմոնոզ

A60 Հետանցքասեռական հերպեսային վիրուսային վարակ (herpes simpex)

A60.0 Սեռական օրգանների և միզասեռական ուղու հերպեսային վարակ

A60.1 Ուղիղ աղիքի և շուրջհետանցքային մաշկային ծածկույթների հերպեսային վարակներ

A60.9 Հետանցքասեռական շրջանի չճշտված հերպեսային վարակ

A63 Առավելապես սեռական ուղիով փոխանցվող այլ հիվանդություններ, որոնք դասակարգված չեն այլ խմբերում

Բացառությամբ՝ շփումային մոլյուսկը (B08.1), արգանդի վզիկի պապիլոման (D26.0)

A63.0 Հետանցքասեռական (վեներական) գորտնուկներ (կոնդիլոմաներ)

A63.8 Առավելապես սեռական ուղիով փոխանցվող ճշտված այլ հիվանդություններ

A64 Սեռական ուղիով փոխանցվող չճշտված հիվանդություններ

ՍՊԻՐՈԽԵՏԱՆԵՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ (A65-A69)

Բացառությամբ՝ լեպտոսպիրոզը (A27.-), սիֆիլիսը (A50-A53)

A65 Ոչ վեներական սիֆիլիս

A66 Ֆրամբեզիա

Ներառյալ՝ բոուբան, պիանը, ֆրամբեզիան (արևադարձային)

A66.0 Առաջնային ֆրամբեզիային ախտահարում

A66.1 Ներբանի բազմաթիվ պապիլոմաներ և պիանոմաներ

A66.2 Այլ վաղ մաշկային ֆրամբեզիային ախտահարում

A66.3 Ֆրամբեզիային հիպերկերատոզ

A66.4 Ֆրամբեզիային վարակակոշտուկներ (գումմա) և խոցեր

A66.5 Գանգոզա

A66.6 Ոսկրերի և հոդերի ֆրամբեզիային ախտահարում

A66.7 Ֆրամբեզիաների այլ դրսևորում

A66.8 Գաղտնի ֆրամբեզիա

A66.9 Չճշտված ֆրամբեզիա

A67 Պինտա (կարատե)

A67.0 Առաջնային ախտահարում պինտայի ժամանակ

A67.1 Միջանկյալ ախտահարում պինտայի ժամանակ

A67.2 ՈՒշացած ախտահարում պինտայի ժամանակ

A67.3 Խառը ախտահարում պինտայի ժամանակ

A67.9 Չճշտված պինտա

A68 Հետադարձ տենդեր

Ներառյալ՝ հետադարձ տիֆ

Բացառությամբ՝ Լայմայի հիվանդություն (A69.2)

A68.0 Ոջլային հետադարձ տենդ

A68.1 Համաճարակային հետադարձ տիֆ

A68.9 Չճշտված հետադարձ տենդ

A69 Սպիրոխետաներից առաջացած այլ վարակներ

A69.0 Քայքայվող, խոցային ստոմատիտ

A69.1 Վենսանի այլ վարակներ

A69.2 Լայմայի հիվանդություն

A69.8 Ճշտված այլ սպիրոխետային վարակներ

A69.9 Չճշտված սպիրոխետային վարակ

ԽԼԱՄԻԴԻԱՆԵՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ (A70-A74)

A70 Chlamydia psittaci-ից առաջացած վարակ

A71 Տրախոմա

Բացառությամբ՝ տրախոմայի հետևանքները (B94.0)

A71.0 Տրախոմայի սկզբնափուլ

A71.1 Տրախոմայի ակտիվ փուլ

A71.9 Չճշտված տրախոմա

A74 Խլամիդիաներից առաջացած այլ հիվանդություններ

Բացառությամբ՝ նորածնային խլամիդիային՝ կոնյունկտիվիտ (P39.1), թոքաբորբը (P23.1), խլամիդիաներից առաջացած սեռական ուղիով փոխանցվող հիվանդությունները (A55-A56), խլամիդիական թոքաբորբը (J16.0)

A74.0+ Եղջերաթաղանթի խլամիդիային բորբոքում (կոնյունկտիվիտ) (H13.1 *)

A74.8 Խլամիդիային այլ հիվանդություններ

A74.9 Չճշտված խլամիդիային վարակ

ՌԻԿԵՏՑԻՈԶՆԵՐ
(A75-A79)

A75 Բծավոր տիֆ

Բացառությամբ՝ Ehrlichia sennetsu-ից առաջացած ռիկետցիոզ (A79.8)

A75.0 Rickettsia prowasekii-ից առաջացած համաճարակային ոջլային տիֆ

A75.1 Կրկնվող տիֆ (Բրիլլի հիվանդություն)

A75.2 Rickettsia typhi-ից առաջացած տիֆ

A75.3 Rickettsia tsutsugamushi-ից առաջացած տիֆ

A75.9 Չճշտված բծավոր տիֆ

A77 Բծավոր տենդ (տզային ռիկետցիոզ)

A77.0 Բծավոր տենդ՝ առաջացած Rickettsia richettsii-ից

A77.1 Բծավոր տենդ՝ առաջացած Rickettsia conorii-ից

A77.2 Բծավոր տենդ՝ առաջացած Rickettsia siberica-ից

A77.3 Բծավոր տենդ՝ առաջացած Rickettsia austtralisi-ից

A77.8 Այլ բծավոր տենդեր

A77.9 Չճշտված բծավոր տենդեր

A78 Կու տենդ

A79 Այլ ռիկետցիոզներ

A79.0 Խրամատային տենդ

A79.1 Ծաղկատիպ ռիկետցիոզ՝ առաջացած Rickettsia akari-ից

A79.8 Այլ ճշտված ռիկետցիոզներ

A79.9 Չճշտված ռիկետցիոզներ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿՆԵՐ
(A80-A89)

Բացառությամբ՝ հետևանքները՝ վիրուսային էնցեֆալիտի (B94.1), պոլիոմիելիտի (B91)

A80 Սուր պոլիոմիելիտ

A80.0 Պատվաստանյութով զուգորդված սուր պոլիոմիելիտ՝ կաթվածահարությամբ

A80.1 Սուր կաթվածահարությամբ պոլիոմիելիտ՝ առաջացած բերովի՝ վայրի վիրուսից

A80.2 Սուր կաթվածահարությամբ պոլիոմիելիտ՝ առաջացած բնական՝ վայրի վիրուսից

A80.3 Չճշտված և այլ սուր կաթվածահարությամբ պոլիոմիելիտ

A80.4 Սուր՝ ոչ կաթվածահարությամբ պոլիոմիելիտ

A80.9 Չճշտված սուր պոլիոմիելիտ

A81 Կենտրոնական նյարդային համակարգի դանդաղընթաց վիրուսային վարակ

A81.0 Կրեյտցֆելդտ-Յակոբի հիվանդություն

A81.1 Ենթասուր սկլերոզացվող պանէնցեֆալիտ

A81.2 Զարգացող (աճող) բազմօջախային լեյկոէնցեֆալոպաթիա

A81.8 Կենտրոնական նյարդային համակարգի դանդաղընթաց այլ վիրուսային վարակներ

A81.9 Կենտրոնական նյարդային համակարգի դանդաղընթաց չճշտված վիրուսային վարակներ

A82 Կատաղություն

A82.0 Անտառային կատաղություն

A82.1 Քաղաքային կատաղություն

A82.9 Չճշտված կատաղություն

A83 Մոծակավիրուսային էնցեֆալիտ

Ներառյալ՝ մոծակավիրուսային մենինգոէնցեֆալիտ

Բացառությամբ՝ վենեսուելյան ձիու էնցեֆալիտ (A92.2)

A83.0 Ճապոնական էնցեֆալիտ

A83.1 Հարավային ձիու էնցեֆալիտ

A83.2 Արևելյան ձիու էնցեֆալիտ

A83.3 Սենտ-Լուիսի էնցեֆալիտ

A83.4 Ավստրալիական էնցեֆալիտ

A83.5 Կալիֆոռնիական էնցեֆալիտ

A83.6 Հիվանդություն՝ առաջացած Ռոցիոյի վիրուսից

A83.8 Մոծակային այլ վիրուսային էնցեֆալիտներ

A83.9 Չճշտված մոծակավիրուսային էնցեֆալիտ

A84 Տզային վիրուսային էնցեֆալիտ

Ներառյալ՝ տզային վիրուսային մենինգոէնցեֆալիտ

A84.0 Հեռավորարևելյան տզային էնցեֆալիտ (ռուսական գարնան-ամառային էնցեֆալիտ)

A84.1 Կենտրոնական եվրոպական տզային էնցեֆալիտ

A84.8 Տզային այլ վիրուսային էնցեֆալիտ

A84.9 Չճշտված տզավիրուսային էնցեֆալիտ

A85 Վիրուսային այլ էնցեֆալիտներ, որոնք դասակարգված չեն այլ խորագրերում

Ներառյալ՝ ճշտված վիրուսային. մենինգոէնցեֆալիտ ՉԴԱԽ, էնցեֆալոմիելիտ ՉԴԱԽ

Բացառությամբ՝ բարորակ միալգիկ էնցեֆալոմիելիտը (G93.3), լիմֆոցիտար խորիոմենինգիտը (A87.2), էնցեֆալիտը առաջացած՝ [հերպեսի վիրուսից (herpes simplex) (B00.4), կարմրուկի վիրուսից (B05.0), գոտկավորող որքինի վիրուսից (B02.0), պոլիոմիելիտի վիրուսից (A80.-), էպիդեմիկ պարոտիտի վիրուսից (B26.2)]

A85.0+ Էնտերովիրուսային էնցեֆալիտ (G05.1 *)

A85.1+ Ադենովիրուսային էնցեֆալիտ (G05.1 *)

A85.2 Հոդվածոտանիներից փոխանցվող՝ չճշտված վիրուսային էնցեֆալիտ

A85.8 Այլ ճշտված վիրուսային էնցեֆալիտներ

A86 Վիրուսային չճշտված էնցեֆալիտ

A87 Վիրուսային մենինգիտ

Բացառությամբ՝ մենինգիտ՝ առաջացած [հերպեսի վիրուսից (herpes simplex) (B00.3), կարմրուկի վիրուսից (B05.1), գոտկավորող որքինի վիրուսից (B02.1), պոլիոմիելիտի վիրուսից (A80.-), համաճարակային պարոտիտի վիրուսից (B26.1)]

A87.0+ Էնտերովիրուսային մենինգիտ (G02.0 *)

A87.1+ Ադենովիրուսային մենինգիտ (G02.0 *)

A87.2 Լիմֆոցիտար խորիոմենինգիտ

A87.8 Վիրուսային այլ մենինգիտ

A87.9 Չճշտված վիրուսային մենինգիտ

A88 Կենտրոնական նյարդային համակարգի այլ վիրուսային վարակներ, չդասակարգված

այլ խորագրերում

Բացառությամբ՝ վիրուսային [մենինգիտը ԱՀՃ (A87.9), էնցեֆալիտը ԱՀՃ (A86)]

A88.0 Էնտերովիրուսային էքզանթեմատոզ տենդ (բոստոնյան էքզանթեմա)

A88.1 Համաճարակային գլխապտույտ

A88.8 Կենտրոնական նյարդային համակարգի այլ ճշտված վիրուսային վարակներ

A88 Կենտրոնական նյարդային համակարգի չճշտված վիրուսային վարակներ

ՀՈԴՎԱԾՈՏԱՆԻՆԵՐՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՏԵՆԴԵՐ ԵՎ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՄՈՌԱԳԻԿ ՏԵՆԴԵՐ (A90-A99)

A90 Դենգեի տենդ (դենգեի դասական տենդ)

Բացառությամբ՝ Դենգեի վիրուսից առաջացած հեմոռագիկ տենդը (A91)

A91 Դենգեի վիրուսից առաջացած հեմոռագիկ տենդ

A92 Մոծակային այլ վիրուսային տենդեր

Բացառությամբ՝ Ռոսս գետի հիվանդությունը (B33.1)

A92.0 Չիկունգունյա վիրուսից առաջացած հիվանդություն

A92.1 Օժ Նյոնգ-Նյոնգի տենդ

A92.2 Վենեսուելյան ձիու տենդ

A92.3 Արևմտյան Նիլի տենդ

A92.4 Ռիֆտ-Վալլի հովտատենդ

A92.8 Այլ ճշտված մոծակային վիրուսային տենդ

A92.9 Մոծակային վիրուսային տենդ, չճշտված

A93 Հոդվածոտանիներով փոխանցվող այլ վիրուսային տենդեր, չդասակարգված այլ խորագրերում

A93.0 Օրոպուշ վիրուսից առաջացած հիվանդություն

A93.1 Մլակային տենդ

A93.2 Կոլորադոյան տզային տենդ

A93.8 Հոդվածոտանիներով փոխանցվող ճշտված այլ վիրուսային տենդեր

A94 Հոդվածոտանիներով փոխանցվող չճշտված վիրուսային տենդեր

A95 Դեղին տենդ

A95.0 Անտառային դեղին տենդ

A95.1 Քաղաքային դեղին տենդ

A95.9 Չճշտված դեղին տենդ

A96 Արենավիրուսային հեմոռագիկ տենդ

A96.0 Խունին հեմոռագիկ տենդ

A96.1 Մաչուպոյի հեմոռագիկ տենդ

A96.2 Լասսի տենդ

A96.8 Այլ արենովիրուսային հեմոռագիկ տենդ

A96.9 Արենովիրուսային չճշտված հեմոռագիկ տենդ

A98 Վիրուսային այլ հեմոռագիկ տենդեր, չդասակարգված այլ խորագրերում

Բացառությամբ՝ Չիկունգունի հեմոռագիկ տենդը (A92.0), Դենգեի հեմոռագիկ տենդը (A91)

A98.0 Ղրիմի հեմոռագիկ տենդ (Կոնգո վիրուսից առաջացած)

A98.1 Օմսկի հեմոռագիկ տենդ

A98.2 Կյասանուրյան անտառային հիվանդություն

A98.3 Մարբուրգ վիրուսից առաջացած հիվանդություն

A98.4 Էբոլի վիրուսից առաջացած հիվանդություն

A98.5 Հեմոռագիկ տենդ՝ երիկամային համախտանիշով

A98.8 Ճշտված այլ վիրուսային հեմոռագիկ տենդեր

A99 Չճշտված վիրուսային հեմոռագիկ տենդ

ՄԱՇԿԻ ԵՎ ԼՈՐՁԱԹԱՂԱՆԹՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՐՈՒՄՆԵՐՈՎ ԲՆՈՐՈՇՎՈՂ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿՆԵՐ (B00-B09)

B00 Հերպեսի վիրուսից (herpes simplex) առաջացած վարակներ

Բացառությամբ՝ հետանցքասեռական շրջանի հերպեսային վիրուսային վարակը (A60.-), բնածին հերպեսային վիրուսային վարակը (P35.2), գամմահերպեսավիրուսային մոնոնուկլեոզը (B27.0), հերպեսային անգինան (B08.5)

B00.0 Հերպեսային էքզեմա

B00.1 Հերպեսային վեզիկուլյար մաշկաբորբ

B00.2 Հերպեսային գինգիվոստոմատիտ և ֆարինգոտոնզիլիտ

B00.3+ Հերպեսային մենինգիտ (G02.0 *)

B00.4+ Հերպեսային էնցեֆալիտ (G05.1 *)

B00.5+ Աչքի հերպեսային հիվանդություն

B00.7 Դիսսեմինացված հերպեսային հիվանդություն

B00.8 Հերպեսային վարակի այլ ձևեր

B00.9 Չճշտված հերպեսային վարակ

B01 Ջրծաղիկ (Varicella)

B01.0+ Ջրծաղիկ՝ մենինգիտի հետ (G02.0 *)

B01.1+ Ջրծաղիկ՝ էնցեֆալիտի հետ (G05.1 *)

B01.2+ Ջրծաղիկ՝ թոքաբորբի հետ (J17.1 *)

B01.8 Ջրծաղիկ՝ այլ բարդություններով

B01.9 Ջրծաղիկ ՝ առանց բարդությունների

B02 Գոտկավորող որքին՝ (herpes zoster)

Ներառյալ՝ Գոտկավորող հերպես zona

B02.0+ Գոտկավորող որքին՝ էնցեֆալիտի հետ (G05.1 *)

B02.1+ Գոտկավորող որքին՝ մենինգիտի հետ (G02.0 *)

B02.2+ Գոտկավորող որքին `նյարդային համակարգի այլ բարդություններով

B02.3+ Գոտկավորող որքին `աչքի բարդություններով

B02.7 Դիսսեմինացված գոտկավորող որքին

B02.8 Գոտկավորող որքին՝ այլ բարդություններով

B02.9 Գոտկավորող որքին՝ առանց բարդությունների

B03 Ծաղիկ

B04 Վարակ՝ առաջացած կապկի ծաղկի վիրուսից

B05 Կարմրուկ

Ներառյալ՝ morbilli

Բացառությամբ՝ ենթասուր կարծրացնող պանէնցեֆալիտը (A81.1)

B05.0+ Կարմրուկ՝ բարդացած էնցեֆալիտով (G05.1 *)

B05.1+ Կարմրուկ՝ բարդացած մենինգիտով (G02.0 *)

B05.2+ Կարմրուկ՝ բարդացած թոքաբորբով (J17.1 *)

B05.3+ Կարմրուկ՝ բարդացած միջին ականջաբորբով (H67.1 *)

B05.4 Կարմրուկ՝ աղիքային բարդություններով

B05.8 Կարմրուկ՝ այլ բարդություններով

B05.9 Կարմրուկ՝ առանց բարդությունների

B06 Կարմրախտ (գերմանական կարմրուկ)

Բացառությամբ՝ բնածին կարմրախտը (P35.0)

B06.0+ Կարմրախտ՝ նյարդային բարդություններով

B06.8 Կարմրախտ՝ այլ բարդություններով

B09.9 Կարմրախտ՝ առանց բարդությունների

B07 Վիրուսային գորտնուկներ

Բացառությամբ՝ հետանցքասեռական (վեներական) շրջանի գորտնուկները (A63.0), պապիլոմա՝ կոկորդի (D14.1), միզապարկի (D41.4), արգանդի վզիկի (D26.0)

B08 Վիրուսային այլ վարակներ՝ բնութագրվող մաշկի և լորձաթաղանթների ախտահարմամբ, չդասակարգված այլ խորագրերում

Բացառությամբ՝ վեզիկուլյար ստոմատիտի վիրուսից առաջացած հիվանդությունը (A93.8)

B08.0 Orthopoxvirus-ից առաջացած այլ վարակներ

Բացառությամբ՝ կապկի ծաղիկ հիվանդությունից վիրուսից առաջացած վարակները (B04)

B08.1 Կոնտակտային մոլյուկս

B08.2 Հանկարծակի էքզանթեմա (վեցերորդ հիվանդություն)

B08.3 Վարակային էրիթեմա (հինգերորդ հիվանդություն)

B08.4 Էնտերովիրուսային վեզիկուլյար ստոմատիտ էկզանթեմայով

B08.5 Էնտերովիրուսային վեզիկուլյար ֆարինգիտ

B08.8 Այլ ճշտված վարակներ՝ բնութագրվող մաշկի և լորձաթաղանթների ախտահարումներով

B09 Մաշկի և լորձաթաղանթների ախտահարումով բնութագրվող՝ չճշտված վիրուսային վարակներ

ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏ
(B15-B19)

Բացառությամբ՝ հերպեսավիրուսային (herpes simplex) հեպատիտը (լյարդաբորբը) (B00.8), վիրուսային հեպատիտի հետևանքները (B94.2), ցիտոմեգալովիրուսային հեպատիտը (B25.1)

B15 Սուր հեպատիտ

A B15.0 Հեպատիտ A՝ լյարդային կոմայով

B15.9 Հեպատիտ A՝ առանց լյարդային կոմայի

B16 Սուր հեպատիտ B

B16.0 Սուր հեպատիտ B՝ դելտա-ագենտով (կովարակ) և լյարդային կոմայով

B16.1 Սուր հեպատիտ B՝ դելտա-ագենտով (կովարակ) առանց լյարդային կոմայի

B16.2 Սուր հեպատիտ B՝ առանց դելտա-ագենտի, լյարդային կոմայով

B16.9 Սուր հեպատիտ B՝ առանց դելտա-ագենտի և լյարդային կոմայի

B17 Այլ սուր վիրուսային հեպատիտներ

B17.0 Հեպատիտ B վիրուսակրի սուր դելտա (սուպեր) վարակ

B17.1 Սուր հեպատիտ C

B17.2 Սուր հեպատիտ E

B17.8 Այլ ճշտված սուր վիրուսային հեպատիտներ

B18 Քրոնիկ վիրուսային հեպատիտ

B18.0 Քրոնիկ վիրուսային հեպատիտ B՝ դելտա-ագենտով

B18.1 Քրոնիկ վիրուսային հեպատիտ B՝ առանց դելտա-ագենտի

B18.2 Քրոնիկ վիրուսային հեպատիտ C

B18.8 Այլ քրոնիկ վիրուսային հեպատիտ

B18.9 Քրոնիկ վիրուսային հեպատիտ չճշտված

B19 Չճշտված վիրուսային հեպատիտ

B19.0 Չճշտված վիրուսային հեպատիտ կոմայով

B19.9 Չճշտված վիրուսային հեպատիտ առանց երիկամային կոմայի

ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ (ՄԻԱՎ) (B20-B24)

Բացառությամբ՝ մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած առանց

ախտանիշների վարակը ՄԻԱՎ (Z21)

B20 Հիվանդություն՝ առաջացած մարդու իմունային անբավարարության վիրուսից (ՄԻԱՎ)՝ վարակիչ և մակաբուծական հիվանդությունների դրսևորումներով

Բացառությամբ՝ սուր վարակիչ համախտանիշը՝ առաջացած ՄԻԱՎ-ից (B23.0)

B20.0 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ միկոբակտերիալ վարակի դրսևորմամբ

B20.1 Հիվանդություն՝ առաջացած՝ ՄԻԱՎ-ից՝ այլ մանրէային վարակների դրսևորմամբ

B20.2 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ ցիտոմեգալովիրուսային վարակի դրսևորմամբ

B20.3 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ այլ վիրուսային վարակների դրսևորմամբ

B20.4 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ կանդիդոզի դրսևորմամբ

B20.5 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ այլ միկոզների դրսևորմամբ

B20.6 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ Pneumocystis carinii-ից առաջացած թոքաբորբի դրսևորմամբ

B20.7 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից

B20.8 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ այլ վարակիչ և մակաբուծական վարակների դրսևորմամբ

B20.9 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ չճշտված վարակիչ և մակաբուծական հիվանդությունների դրսևորմամբ

B21 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ չարորակ նորագոյացությունների դրսևորմամբ

B21.0 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ սարկոմա Կապոշիի դրսևորմամբ

B21.1 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ Լիմֆոմա Բերկիտայի դրսևորմամբ

B21.2 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ այլ ոչ հոջկինային լիմֆոմայի դրսևորմամբ

B21.3 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ ավշային, արյունաստեղծ և համանման հյուսվածքների այլ չարորակ նորագոյացությունների դրսևորմամբ

B21.7 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ բազմաքանակ չարորակ նորագոյացությունների դրսևորմամբ

B21.8 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ չարորակ այլ նորագոյացությունների դրսևորմամբ

B21.9 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ չճշտված չարորակ նորագոյացությունների դրսևորմամբ

B22 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ այլ ճշտված հիվանդությունների դրսևորմամբ

B22.0 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ էնցեֆալոպաթիայի դրսևորմամբ

B22.1 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ ավշային ինտեստիցիալ պնևմանիտի դրսևորմամբ

B22.2 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ հյուծող համախտանիշի դրսևորմամբ

B22.7 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ բազմաքանակ հիվանդությունների դրսևորմամբ, որոնք դասակարգված են այլ խորագրերում

Ծանոթություն: Այս խմբից օգտվելու ժամանակ պետք է հիմնվել հիվանդացության և մահացության կոդավորման հրահանգների վրա:

B23 Հիվանդություն՝ առաջացած մարդու իմունային անբավարարության վիրուսից (ՄԻԱՎ)՝ այլ վիճակների դրսևորմամբ

B23.0 Սուր ՄԻԱՎ-ի վարակային համախտանիշ

B23.1 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից (պերսիստենտային (մշտական) գեներալիզացված՝ լիմֆադենոպաթիայի դրսևորմամբ

B23.2 Հիվանդություն՝ առաջացած ՄԻԱՎ-ից՝ արյունաբանական և իմունաբանական խանգարումների դրսևորմամբ, չդասակարգված այլ խորագրերում.

B23.8 Հիվանդություն՝ ՄԻԱՎ-ից առաջացած՝ ճշտված այլ վիճակների դրսևորմամբ

B24 Հիվանդություն՝ ՄԻԱՎ-ից առաջացած՝ չճշտված

ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(B25-B34)

B25 Ցիտոմեգալովիրուսային հիվանդություն

Բացառությամբ՝ բնածին ցիտոմեգալովիրուսային վարակը (P35.1), ցիտոմեգալովիրուսային մոնոնուկլեոզը (B27.1)

B25.0+ Ցիտոմեգալովիրուսային պնևմանիտ (J17.1 *)

B25.1+ Ցիտոմեգալովիրուսային հեպատիտ (K77.0 *)

B25.2+ Ցիտոմեգալովիրուսային պանկրեատիտ (K87.1 *)

B25.8 Ցիտոմեգալովիրուսային այլ հիվանդություններ

B25.9 Ցիտոմեգալովիրուսային չճշտված հիվանդություն

B26 Համաճարակային պարոտիտ (խոզակ)

Ներառյալ՝ պարոտիտ՝ վարակային, համաճարակային

B26.0+ Պարոտիտային օրխիտ (N51.1 *)

B26.1+ Պարոտիտային մենինգիտ (G02.0 *)

B26.2+ Պարոտիտային էնցեֆալիտ (G05.1 *)

B26.3+ Պարոտիտային պանկրեատիտ (K87.1 *)

B26.8 Էպիդեմիկ պարոտիտ այլ բարդություններով

B26.9 Էպիդեմիկ պարոտիտ չբարդացված

B27 Վարակային մոնոնուկլեոզ

Ներառյալ՝ Պֆեյֆֆերի հիվանդությունը, գեղձային տենդը, մոնոցիտար անգինան

B27.0 Մոնոնուկլեոզ՝ առաջացած գամմա-հերպեսային վիրուսից

B27.1 Ցիտոմեգալովիրուսային մոնոնուկլեոզ

B27.8 Այլ վարակային մոնոնուկլեոզ

B27.9 Վարակային մոնոնուկլեոզ՝ չճշտված

B30 Վիրուսային կոնյունկտիվիտ

Բացառությամբ՝ աչքի հիվանդությունը՝ առաջացած վիրուսից՝ հերպեսի (herpes simplex) (B00.5), գոտկավորվող որքինի (B02.3)

B30.0+ Կերատոկոնյունկտիվիտ՝ առաջացած ադենովիրուսից (H19.2 *)

B30.1+ Կոնյունկտիվիտ՝ առաջացած ադենովիրուսից (H13.1 *)

B30.2 Վիրուսային ֆարինգոկոնյունկտիվիտ

B30.3+ Սուր համաճարակային հեմոռագիկ կոնյունկտիվիտ (էնտերովիրուսային) (H13.1 *)

B30.8+ Վիրուսային այլ կոնյունկտիվիտ (H13.1 *)

B30.9 Վիրուսային կոնյունկտիվիտ՝ չճշտված

B33 Այլ վիրուսային հիվանդություններ, չդասակարգված այլ խորագրերում

B33.0 Համաճարակային միալգիա

B33.1 Ռոսս-Ռիվերի հիվանդություն

B33.2 Վիրուսային կարդիտ

B33.3 Ռետրովիրուսային վարակներ՝ չդասակարգված այլ խորագրերում

B33.8 Վիրուսային այլ ճշտված հիվանդություններ

B34 Վիրուսային վարակ՝ չճշտված տեղակայումով

Բացառությամբ՝ վիրուսները՝ որպես հիվանդության պատճառ, որոնք դասակարգված են այլ խորագրերում (B97.-), վարակը՝ առաջացած հերպեսի վիրուսից (herpex simplex), ԱՀՃ (B00.9), ռետրովիրուսային վարակը ԱՀՃ (B33.3), ցիտոմեգալովիրուսային հիվանդությունը ԱՀՃ (B25.9)

B34.0 Ադենովիրուսային վարակ՝ չճշտված

B34.1 Էնտերովիրուսային վարակ՝ չճշտված

B34.2 Կորոնավիրուսային վարակ՝ չճշտված

B34.3 Պարվովիրուսային վարակ՝ չճշտված

B34.4 Պապովիրուսային վարակ՝ չճշտված

B34.8 Վիրուսային այլ վարակներ՝ չճշտված տեղակայմամբ

B34.9 Վիրուսային վարակ՝ չճշտված

ՄԻԿՈԶՆԵՐ (ՍՆԿԱԽՏՆԵՐ)

Բացառությամբ՝ հիպերսենսիտիվ պնևմոնիտը՝ առաջացած օրգանական փոշուց (J67.-), սնկանման միկոզը (C84.0)

B35 Դերմատոֆիթիա

Ներառյալ՝ վարակները՝ առաջացած Epidermophyton, Microsporum u Tichophyton տեսակի սնկերից ֆավուս, ֆավուս՝ ցանկացած տիպի՝ բացառությամբ B36.-խմբում նշվածների

B35.0 Մորուքի և գլխի միկոզ

B35.1 Եղունգների միկոզ

B35.2 Ձեռքերի միկոզ

B35.3 Ոտնաթաթերի միկոզ

B35.4 Մարմնի միկոզ

B35.5 Կղմինդրանման միկոզ

B35.6 Էպիդեմոֆիթիա աճուկային

B35.8 Այլ դերմոֆիթիաների

B35.9 Դերմոֆիթիա չճշտված էպիդերմոֆիթիա ԱՀՃ

B36 Այլ մակերեսային միկոզներ

B36.0 Բազմերանգ որքին

B36.1 Սև միկոզ

B36.2 Սպիտակ պյեդրա

B36.3 Սև պյեդրա

B36.8 Այլ ճշտված մակերեսային միկոզ

B36.9 Մակերեսային չճշտված միկոզ

B37 Կանդիդոզ

Ներառյալ՝ կանդիդիազը, մոնիլիազը

Բացառությամբ՝ նորածնային կանդիդոզը (P37.5)

B37.0 Կանդիդոզային ստոմատիտ

B37.1 Թոքային կանդիդոզ

B37.2 Կանդիդոզ մաշկի և եղունգների

Բացառությամբ՝ բարուրային դերմատիտ (L22)

B37.3+ Կանդիդոզ ամոթույքի և հեշտոցի (N77.1 *)

B37.4+ Կանդիդոզ՝ միզասեռական այլ օրգանների տեղակայմամբ

B37.5+ Կանդիդոզային մենինգիտ (G02.1 *)

B37.6+ Կանդիդոզային էնդոկարդիտ (I39.8 *)

B37.7 Կանդիդոզային սեպտիցեմիա

B37.8 Կանդոզ՝ այլ տեղակայմամբ

B37.9 Կանդիդոզ՝ չճշտված

B38 Կոկցիդիոիդոմիկոզ

B38.0 Թոքային սուր կոկցիդիոիդոմիկոզ

B38.1 Քրոնիկ թոքային կոկցիդիոիդոմիկոզ

B38.2 Թոքային կոկցիդիոիդոմիկոզ չճշտված

B38.3 Մաշկային կոկցիդիոիդոմիկոզ

B38.4+ Կոկցիդիոիդոմիկոզային մենինգիտ (G02.1 *)

B38.7 Դիսսեմինացված կոկցիդիոիդոմիկոզ

B38.8 Կոկցիդիոիդոմիկոզի այլ ձևեր

B38.9 Կոկցիդիոիդոմիկոզ չճշտված

B39 Հիստոպլազմոզ

B39.0 Սուր թոքային վարակ՝ առաջացած Histoplasma capsulatum-ից

B39.1 Քրոնիկ թոքային վարակ՝ առաջացած Histoplasma capsulatum-ից

B39.2 Թոքային չճշտված հիստոպլազմոզ
B39.3 Դիսսեմինացված հիստոպլազմոզ
B39.4 Հիստոպլազմոզ չճշտված
B39.5 Վարակ՝ առաջացած Histoplasma duboisil-ից
B39.9 Հիստոպլազմոզ չճշտված
B40 Բլաստոմիկոզ
Բացառությամբ՝ բրազիլական բլաստոմիկոզը (B41.-), կելոդիային բլաստոմիկոզը (B48.0)
B40.0 Սուր թոքային բլաստոմիկոզ
B40.1 Քրոնիկ թոքային բլաստոմիկոզ
B40.2 Թոքային բլաստոմիկոզ չճշտված
B40.3 Մաշկային բլաստոմիկոզ
B40.7 Դիսսեմինացված բլաստոմիկոզ
B40.8 Բլաստոմիկոզի այլ ձևեր
B40.9 Բլաստոմիկոզ չճշտված
B41 Պարակոկցիդիոիդոմիկոզ
Ներառյալ՝ Լյուտցի հիվանդությունը, բրազիլական բլաստոմիկոզը
B41.0 Թոքային պարակոկցիդիոիդոմիկոզ
B41.7 Դիսսեմինացված պարակոկցիդիոիդոմիկոզ
B41.8 Պարակոկցիդիոիդոմիկոզի այլ ձևեր
B41.5 Պարակոկցիդիոիդոմիկոզ չճշտված
B42 Սպորոտրիխոզ
B42.0+ Թոքային սպորոտրիխոզ (J99.8 *)
B42.1 Մաշկաավշային սպորոտրիխոզ
B42.7 Դիսսեմինացված սպորոտրիխոզ
B42.8 Սպորոտրիխոզի այլ ձևեր
B42.9 Սպորոտրիխոզ չճշտված
B43 Քրոմոմիկոզ և ֆեոմիկոտիկային թարախակույտ
B43.0 Մաշկային քրոմոմիկոզ
B43.1 Ուղեղի ֆեոմիկոտային թարախակույտ
B43.2 Ենթամաշկային ֆեոմիկոտային թարախակույտ և բուշտ
B43.8 Քրոմոմիկոզի այլ ձևեր
B43.9 Քրոմոմիկոզ չճշտված
B44 Ասպերգիլյոզ Ներառյալ՝ ասպերգիլյոման
B44.0 Մակաբուծային թոքային ասպերգիլյոզ
B44.1 Թոքային ասպերգիլյոզի այլ ձևեր
B44.2 Նշագեղձային ասպերգիլյոզ
B44.7 Դիսսեմինացված ասպերգիլյոզ
B44.8 Ասպերգիլյոզի այլ ձևեր
B44.9 Ասպերգիլյոզ չճշտված
B45 Կրիպտոկոկկոզ
B45.0 Թոքային կրիպտոկոկկոզ
B45.1 Ուղեղային կրիպտոկոկկոզ
B45.2 Մաշկային կրիպտոկոկկոզ
B45.3 Ոսկրային կրիպտոկոկկոզ
B45.7 Դիսսեմինացված կրիպտոկոկկոզ
B45.8 Կրիպտոկոկկոզի այլ ձևեր
B45.9 Կրիպտոկոկկոզ չճշտված
B46 Զիգոմիկոզ

B46.0 Թոքային մուկորոմիկոզ (բորբոսասնկախտ)

B46.1 Քթաուղեղային մուկորոմիկոզ

B46.2 Աղեստամոքսային մուկորմիկոզ

B46.3 Մաշկային մուկորմիկոզ

B46.4 Դիսսեմինացված մուկորմիկոզ

B46.5 Մուկորոմիկոզ՝ չճշտված

B46.8 Այլ զիգոմիկոզներ

B46.9 Զիգոմիկոզ չճշտված

B47 Միցետոմա (սնկախտի ծանր տեսակ)

B47.0 Իսկական միցետոմա

B47.1 Ակտինոմիցետոմա

B47.9 Միցետոմա չճշտված

B48 Այլ միկոզներ, չդասակարգված այլ խորագրերում

B48.0 Լոբոմիկոզ

B48.1 Ռինոսպորիդիոզ

B48.2 Ալլեշերոզ

Բացառությամբ՝ իսկական միցետոման (B47.0)

B48.3 Գեոտրիխոզ

B48.4 Պենիցիլյոզ

B48.7 Օպորտունիստական միկոզներ

B48.8 Ճշտված այլ միկոզներ

B49 Միկոզ՝ չճշտված

ՆԱԽԱԿԵՆԴԱՆԱԿԱՆ (ՊՐՈՏՈՉՕՈԱՅԻՆ) ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ (B50-B64)

Բացառությամբ՝ ամյոբիազը (A06.-), այլ նախակենդանական աղիքային վարակները (A07.-)

B50 Մալարիա (ճանճատենդ)՝ առաջացած Plasmodium falciparum-ից

Ներառյալ՝ խառը վարակները առաջացած Plasmodium falciparum-ի, խառնված մալարիայի պլազմոդեմների այլ ձևերի հետ

B50.0 Մալարիա՝ առաջացած plasmodium falciparum-ից, գլխուղեղային բարդություններով

B50.8 Մալարիայի այլ ծանր և բարդացած տեսակներ՝ առաջացած plasmodium falciparum-ից

B50.9 Մալարիա՝ չճշտված, առաջացած plasmodium falciparum-ից

B51 Մալարիա՝ առաջացած plasmodium vivax-ից

